ՌՈՒՍ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՎՐԱ

ՓԱԽԼՅԱՆ Ա. Ա.

Համաշխարհային տնտեսության գլոբալացման խորացումը հասել է այնպիսի աստիճանի, որ մի երկրում դրսևորվող տնտեսական միտումներն ու քաղաքական իրադարձություններն անխուսափելիորեն իրենց ազդեցությունն են թողնում գործընկեր երկրների տնտեսությունների վրա: Նմանօրինակ ազդեցությունների հանդեպ հատկապես զգայուն են գործընկեր երկրներից մեծ կախում ունեցող պետությունները: Որքան խորն է մի երկրի կախվածությունը մյուսից, այնքան ավելի շոշափելի է այդ երկրներից մեկում տեղի ունեցող տնտեսական կամ քաղաքական ցնցումների ազդեցությունը մյուսի վրա:

Լինելով ցամաքային երկիր՝ Հայաստանը մեծապես կախված է վրացական տրանսպորտային ենթակառուցվածքներից, որոնք սպասարկում են Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառության գրեթե 70%-ը[1]: Հետևաբար, պատահական չէ, որ Վրաստանում առաջացող քաղաքական կամ տնտեսական որևէ խնդիր անմիջական ազդեցություն է ունենում Հայաստանի արտաքին ապրանքային հոսքերի վրա:

Դեռևս 1990-ական թթ., երբ համատարած թալանի ու հարձակումների էին ենթարկվում աբխազական[2] երկաթուղով դեպի Հայաստան բեռներ տեղափոխող գնացքները, Վրաստանը ստիպված էր միջազգային տույժեր վճարել իր ապրանքները տվյալ տարածքում կորցրած Հայաստանին[3]: Այդ առիթով նույնիսկ կնքվել է երկու երկրի միջև տարանցիկ փոխադրումների հիմնական սկզբունքները կարգավորող համաձայնագիր, որով կողմերը պարտավորվում են ամբողջությամբ փոխհատուցել իրենց տարածքներում անօրինական գործողություններով (ավազակային հարձակում, կողոպուտ, հափշտակություն, դիվերսիա և այլն) տարանցիկ բեռներին և տրանսպորտային միջոցներին հասցված վնասներն ու վերացնել

---

[1] *Հայաստան 2008. Ճգնաժամ և հնարավորություններ, Ե., 2008, էջ 23:*

[2] *Աբխազիան ռազմավարական դիրք է գրավում Կովկասում. կապում է Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը Ռուսաստանի հետ:*

[3] *Ի դեպ, նշենք, որ աբխազական երկաթգծով բեռնատար գնացքները վերջին անգամ Հայաստան են հասել 1992 թ. օգոստոսին: Կարծիք կա, որ հենց առևտրային ճանապարհների անվտանգության խնդիրը դարձավ վրաց-աբխազական հակամարտության տնտեսական պատճառը: Դրա հետևանքով, տվյալ տարածքի տարանցիկ ճանապարհն ամբողջությամբ շրջափակված է, ինչն առավել ցավալի է հատկապես Հայաստանի համար, որը Ռուսաստան տանող երկաթուղային այլ ճանապարհ չունի:*

դրանց հետևանքները[4]:

Մեր երկրի արտաքին ապրանքաշրջանառության վրա Վրաստանի ներքաղաքական իրադրության ազդեցությունը շոշափելի էր հատկապես 2008 թ. օգոստոսին, երբ ռուս-վրացական պատերազմի հետևանքով մի քանի օրով փակվել էր Հայաստանի հյուսիսային ելքը, և վերջինս ստիպված էր արտաքին աշխարհի հետ ցամաքային կապ հաստատել միայն Իրանի միջոցով:

2008 թ. օգոստոսյան պատերազմի ժամանակ արտահանման ուղիների խափանման պատճառով Հայաստանի կրած վնասները գնահատվեցին մոտ 600-700 միլիոն ԱՄՆ դոլար[5]: Նշենք, որ այդ գումարը համարժեք է Հայաստանի 2008 թ. ամբողջ արտաքին ապրանքաշրջանառության 11-13%-ին: Հայաստանի արտաքին ապրանքային հոսքերի վրա օգոստոսյան իրադարձությունների ազդեցության մասին առավել ամբողջական պատկերացում կազմելու համար բավական է վերլուծել տվյալ ժամանակահատվածի առևտրային ցուցանիշները: Ստորև բերված գծապատկերն արտացոլում է հայ-իրանական առևտրի ծավալների փոփոխությունն օգոստոսյան իրադարձությունների ազդեցությամբ:

Գծ. 1

ՀՀ արտաքին առևտուրն Իրանի հետ 2008 թ.՝ ըստ ամիսների



Երբ դիտարկում ենք 2008 թ. հայ-իրանական առևտուրն ամիսների կտրվածքով, ակնհայտ է դառնում, որ սեպտեմբեր ամսին երկու երկրների միջև գրանցվել է փոխադարձ առևտրի կտրուկ աճ. նախորդ ամսվա համեմատ գրեթե 2,5 անգամ ավելացել է Իրանի հետ արտաքին առևտրաշրջանառությունը, իսկ ներմուծման ծավալներն առավել քան 74%-ով գերազանցել են նախորդ տարվա

---

[4] *Համաձայնագիր ՀՀ կառավարության և Վրաստանի կառավարության միջև տարանցիկ փոխադրումների հիմնական սկզբունքների մասին՝ կնքված 1993 թ. մայիսի 19-ին Երևանում (տե՛ս http://www.armeniaforeignministry.am):*

[5] *Տե՛ս* **Մելքումյան Ն.,** *Ռուս-վրացական լարվածությունը գործում է ի վնաս Հայաստանի, http://www.hetq.am/am/economy/iwpr-9/ - 06.06.2009:*

նույն ժամանակահատվածի մակարդակը: Իսկ տարեկան կտրվածքով 2007 թ. համեմատ գրանցվել է Իրանից ներմուծումների 30 % և ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալների 21 % աճ[6]:

Սեպտեմբեր ամսին գրանցված իրանական ներմուծումների կրտրուկ աճը մատնանշում է Հայաստանի առևտրային հարաբերություններում Իրանի դերի բարձրացումը: Սակայն հետագա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2008 թ. օգոստոսյան իրադարձություններին հաջորդած՝ Իրանից Հայաստանի ներմուծումների ծավալի կտրուկ աճը կայուն բնույթ չկրեց, և խաղաղության հաստատմամբ վերականգնվեցին հարևան երկրների հետ առևտրի նախկին ծավալներն ու աճի տեմպերը՝ չնչին տատանումներով:

Պատկերի ամբողջացման համար դիտարկենք նաև նույն ժամանակահատվածում հայ-վրացական առևտուրն՝ ըստ առանձին ամիսների: Թեև 2008 թ. օգոստոս ամսվա ներմուծումները գրեթե 4 անգամ կրճատվել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, տարեկան կտրվածքով Վրաստանի հետ Հայաստանի ապրանքաշրջանառությունը զիջել է 2007 թ. նույն ցուցանիշին ընդամենը 2%-ով կամ 3 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 131 մլն դոլար:

Գծ. 2

ՀՀ արտաքին առևտուրը Վրաստանի հետ 2008 թ.՝ ըստ ամիսների



Գծապատկեր 2-ից երևում է, որ 2008 թ. օգոստոս ամսին եղել է Վրաստանի հետ առևտրային ցուցանիշների որոշակի ծավալային անկում, որը հաջորդող ժամանակահատվածում փոխարինվել է առավել սրընթաց աճով: Փաստորեն, նույնիսկ քաղաքական անկայունության պայմաններում Վրաստանի դերն անգնահատելի է Հայաստանի տարանցիկ փոխադրումների գործում: Պատճառներից են,

---

[6] *Համաձայն «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008 թվականի հունվար-դեկտեմբերին» տեղեկատվական ամսական զեկույցի [ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (այսուհետև՝ ՀՀ ԱՎԾ), Ե., 2009, էջ 118-120]:*

թերևս, ներկայումս Իրանի և Հայաստանի միջև ճանապարհատրանսպորտային հնարավորությունների սահմանափակությունն ու ենթակառուցվածքների թերզարգացածությունը, որոնք հայ գործարարներին ստիպում են արտաքին առևտրում նախապատվությունը տալ վրացական կողմի գործընկերներին: Թեև լուրջ աշխատանքներ են տարվում Իրանի հետ այլընտրանքային ուղիների ստեղծման ուղղությամբ, սակայն Իրանը չի կարող ամբողջությամբ փոխարինել Վրաստանին՝ տարանցիկ փոխադրումների տեսանկյունից, քանի որ մեր երկրի արտաքին ապրանքաշրջանառության գերակշիռ մասը կապված է Ռուսաստանի և Եվրոպայի հետ:

Գծապատկեր 2-ը ցույց է տալիս, որ Վրաստանից կատարվող ներմուծումների՝ «ըստ ծագման երկրի» և «ըստ առևտուր անող երկրի» ցուցանիշների միջև առկա է հսկայական խզում, որը ևս բացատրվում է տարանցիկ փոխադրումների ծառայություններում Վրաստանի մասնագիտացմամբ: «Ըստ առևտուր անող երկրի» սկզբունքով հաշվառված ներմուծումները, վրացական ծագում ունեցող ապրանքներից բացի, ներառում են Վրաստանում գրանցված ընկերությունների կողմից Հայաստան ներմուծվող, հիմնականում թուրքական ծագման ապրանքները: Փաստորեն, նշված երկու սկզբունքներով հաշվարկված ներմուծումների ցուցանիշների համեմատության շնորհիվ կարելի է մոտավոր պատկերացում կազմել Վրաստանի միջնորդությամբ իրականացվող հայ-թուրքական «քողարկված» առևտրի իրական ծավալների մասին:

2007 և 2008 թթ. ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ գործառնությունների հաշվի ծառայությունների առևտրի ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միայն տրանսպորտային ծառայությունների գծով մեր երկրի բացասական հաշվեմնացորդն ավելի մեծ է, քան ծառայությունների բոլոր տեսակներինը միասին վերցրած: Եվ եթե միայն տրանսպորտային ծառայությունների գծով բացասական հաշվեմնացորդը մինչև 2006 թ. սովորաբար համարժեք էր ՀՀ վճարային հաշվեկշռի ծառայությունների առևտրի հաշվեկշռի գրեթե 99%-ին, ապա 2007 թ. տրանսպորտային ծառայությունների գծով պակասուրդը գերազանցեց ծառայությունների առևտրի հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդը 7,4%-ով կամ 15,78 մլն ԱՄՆ դոլարով[7]: Դա նշանակում է, որ Հայաստանը տարեցտարի ավելի մեծ գումարներ է վճարում օտարերկրյա տրանսպորտային ընկերություններին: Տեղական տրանսպորտային ընկերությունները չեն կարողանում առավել մրցունակ ծառայություններ առաջարկել, քանի որ ոչ ռեզիդենտ փոխադրողի համար Վրաստանի տարածքով բեռնափոխադրումն ավելի թանկ արժե: Վրաստանն, անշուշտ, անբարեխիղճ վերաբերմունք է դրսևորում դեպի ծով ելք չունեցող երկրի և Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) գծով իր գործընկերոջ հանդեպ՝ վերջինիս համար առավել բարձր տարան-

[7] *Հաշվարկների համար հիմք է ծառայել Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը 2005-2008 թթ. վիճակագրական ժողովածուն (ՀՀ ԱՎԾ, Ե., 2009, էջ 22-28):*

ցիկ վճարներ սահմանելով: Եվ ինչպես նկատել է ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանը, «ապրանքների փոխադրումն աշխարհի ցանկացած կետից դեպի Փոթի կամ Բաթումի փաստացի կրկնակի էժան է, քան Փոթիից և Բաթումիից Հայաստան»[8]:

2006 թ. մարտից Ռուսաստանը բռնարգելք (էմբարգո) է կիրառում վրացական գինիների, հանքային ջրերի և գյուղատնտեսական ապրանքների ներմուծման նկատմամբ: Արդեն 2006 թ. նոյեմբերին Վրաստանի արտահանման կառուցվածքում գինու տեսակարար կշիռը նվազեց ընդհուպ մինչև 4,5%, այն դեպքում, երբ 2005 թ. գինին Վրաստանից արտահանվող երկրորդ ամենակարևոր ապրանքատեսակն էր, որն ապահովում էր երկրի ողջ արտահանման 9,2%-ը[9]: Վիճակագրական ցուցանիշների համադրմամբ կարելի է պարզել, թե Ռուսաստանում վրացական արտադրության ըմպելիքների նկատմամբ կիրառվող արգելքն ինչպես է ազդել հայկական ծագման նույնանուն ապրանքների արտահանման ծավալների վրա:

«Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքախումբը Հայաստանի արտահանման կառուցվածքում զգալի կշիռ ունի: Ապրանքախումբն արտահանման ծավալներով տարբեր տարիներին զբաղեցրել է երկրորդից չորրորդ տեղերը: Այսպես, 2008 թ. այն ապահովել է ՀՀ ողջ արտահանման 13,8%-ը՝ զբաղեցնելով երրորդ տեղը երկրի արտահանման կառուցվածքում: 2006 թ. նախորդ տարվա համեմատությամբ ապրանքախմբի արտահանման ծավալների որոշակի անկում է նկատվել, որին հաջորդել է կտրուկ և շարունակական աճը 2007 և 2008 թթ.:

Կարելի է ենթադրել, որ նման կտրուկ աճի պատճառը, թերևս, վրացական ըմպելիքների վրա դրված արգելքն է և դրա հետևանքով ռուսաստանյան շուկայում հայկական արտադրության խմիչքների համար ձևավորված լրացուցիչ պահանջարկը: Սակայն ըմպելիքների առանձին տեսակների արտահանման ծավալների և դրանց փոփոխությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գինիներն ու հանքային ջրերը, որոնց վրա էլ դրված էր Ռուսաստանի արգելքը, Հայաստանի նշված ապրանքախմբի արտահանման շատ չնչին մասն են ապահովում և, հետևաբար, չեն կարող էական ազդեցություն ունենալ ապրանքախմբի արտահանման ծավալների վրա (տե՛ս գծ. 3): Այսպես, օրինակ, «Խաղողի գինի և շամպայն» ենթախմբին է բաժին ընկել 2007 թ. ոգելից և ոչ ոգելից ըմպելիքների արտահանման ընդամենը 1,6, իսկ 2008 թ.՝ 1,32 %-ը, իսկ «ջրեր, բնական կամ արհեստական հանքային ջրեր և ըմպելիք (առանց շաքարի)» ենթախմբին՝ համապատասխանաբար 3,5 և 3,6 %-ը: Հայաստանում ոգելից խմիչքների արտահանման «առյուծի բաժինը՛ կամ գրեթե 92%-ն ավանդաբար ապահովել են հայկական կոնյակները, որոնց գերակշիռ մասը սպառվում է Ռուսաստանում:

---

[8] *Խնդիրների անհրաժեշտ լուծումը դրանք չլուծելն է. http://hetq.am/am/politics/hay-vracakan-2/-02.07.2009:*

[9] *Հայաստան-Վրաստան հարաբերություններ. չօգտագործված հնարավորություններ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր (ՄԱԶԾ), Հայաստան, Ե., 2007, էջ 15:*

Գծ. 3

Հայկական ծագման ոգելից և ոչ ոգելից ըմպելիքների արտահանման ծավալների փոփոխությունը՝ վրացական ըմպելիքների վրա դրված ռուսական արգելքի ազդեցությամբ



	2005	2006	2007	2008
ոգելից և ոչ ոգելից ըմպելիքների արտահանումը	84.3	79.11	126.19	145.38
ոգելից և ոչ ոգելից ըմպելիքների արտահանումը ՌԴ	71.34	60.79	106.87	121.47
հանքային ջրերի արտահանումը	1.66	3.14	4.47	5.24
խաղողի գինիների արտահանումը	0.95	0.96	2.02	1.92

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հենց կոնյակի արտահանման ծավալների անկումն էլ (նախորդ տարվա համեմատ կոնյակի արտահանումը կրճատվել է 7,6 մլն ԱՄՆ դոլարով) հանգեցրել է 2006 թ. ողջ ապրանքախմբի արտահանման ցուցանիշի անկմանը, առավել ևս, որ ապրանքախմբի կազմում ներառված մնացած բոլոր ըմպելիքների գծով դիտարկվող տարում արտահանման ծավալների աճ է գրանցվել:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2006 թ. կոնյակի արտահանումը նախորդ տարվա համեմատ կրճատվել է 10,6 մլրդ ԱՄՆ դոլարով, այն դեպքում, երբ «ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ողջ ապրանքախմբի արտահանման ծավալների անկումը նույն ժամանակահատվածում կազմել է 5,2 մլրդ ԱՄՆ դոլար: Ստացվում է, որ 2006 թ. ոգելից և ոչ ոգելից ըմպելիքների արտահանման անկումը ավելի մեծ կլիներ, եթե ըմպելիքների մյուս տարատեսակների (բնական և հանքային ջրեր, գինիներ, գարեջուր) գծով արտահանման աճ չգրանցվեր: Գծապատկեր 4-ը ցույց է տալիս ՀՀ ըմպելիքների արտահանման դինամիկան 2003-2008 թթ., պարզ երևում է, որ 2006 թ. արտահանման ընդհանուր ծավալների անկումը պայմանավորված էր բացառապես Ռուսաստանյան արտահանումների կրճատմամբ, քանի որ արտահանումները թե՛ ԱՊՀ անդամ այլ երկրներ և թե՛ հեռավոր արտասահմանյան երկրներ, թեև փոքր ծավալներով և դանդաղ տեմպերով, բայց անընդհատ աճել են՝ առանց կտրուկ տատանումների:

Գծ. 4

«Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքախմբի գծով
ՀՀ արտահանման ծավալների դինամիկան 2003-2008 թթ.



Մի շարք երկրներում և մասնավորապես Ռուսաստանում լայն ճանաչում վայելող հայկական կոնյակի արտահանման ծավալների նմանօրինակ անկման պատճառները բացահայտելու համար երկար մտորելու կարիք չկա. չէ՞ որ հայկական կոնյակի խոշորագույն սպառող Ռուսաստանի հետ կապող մեր միակ ցամաքային ուղին անցնում է Վրաստանով: Փաստորեն, 2006 թ. հունիսից վերանորոգման պատրվակով փակելով ռուս-վրացական սահմանի միակ օրինական՝ Վերին Լարս[10]-Կազբեկի անցակետը՝ Ռուսաստանն անուղղակիորեն ուժգին հարված հասցրեց նաև Հայաստանի ապրանքային հոսքերին: Այդ մասին են վկայում նաև արտահանման ծավալներն ու դրանց փոփոխությունը, այսպես, օրինակ, եթե 2006 թ. Հայաստանի խմիչքների արտահանումն, ընդհանուր առմամբ, նախորդ տարվա համեմատ կրճատվել է 6,2%-ով, ապա նույն ժամանակահատվածում միայն կոնյակների արտահանումը Ռուսաստան նվազել է շուրջ 15%-ով:

Ինչ խոսք, 2006 թ. կոնյակի արտահանման կրճատման հարցում իր որոշակի ազդեցությունն է ունեցել նաև արտադրության ծավալների անկումը: 2005 թ. համեմատությամբ կոնյակի արտադրությունը կրճատվել է 77,4 հազ. լիտրով, այն դեպքում, երբ նույն ժամանակահատվածում վերջինիս արտահանման ծավալներն ավելի մեծ անկում են ունեցել, ինչն ապացուցում է, որ արտադրության անկումը չէ, որ որոշիչ դեր է խաղացել կոնյակի արտահանման ծավալների կրճատման հարցում: Առավել շոշափելի էր բեռնափոխադրումների հետ կապված խոչընդոտների ազդեցությունը. 2006 թ. հունիսից ռուս-վրացական ցամաքային սահմանի փակ[11] լինելու հանգամանքը մատակարարներին ստիպում է ռուսաստանյան շուկա մուտք գործել գերազանցապես համակցված բեռնափոխադրումների միջոցով (օդային տրանսպորտի բարձր սակագներն արդարացվում են սոսկ փոքրածավալ և թանկարժեք բեռների փոխադրման պարագայում). այն է՝ նախ բեռներն ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտով հասնում են մինչև վրացական Փոթի նավահանգիստ, ապա լաստանավով կտրում-անցնում են Սև ծովը՝ կայանելով Նովոռոսիյսկ (Ռուսաստան) կամ Իլյիչևսկ (Ուկրաինա) նավահանգիստներից մեկում, որտեղից էլ շարունակում են իրենց երթուղին մինչև վերջնական նշանակման վայր:

Թերևս հարկ է նշել, որ դիտարկվող ժամանակահատվածում բավականաչափ աճել են հայրենական արտադրության գինիների ու հանքային ջրերի արտահանման ծավալները, այլ բան է այն իրողությունը, որ նույնիսկ այդ «զգալի աճը» չափազանց աննշան է բավարարելու համար դրանց նկատմամբ ռուսական պահանջարկը:

---

[10] Վերին Լարս անցակետով, Կենտրոնական Կովկասը կիսելով, անցնում է Թբիլիսի-Վլադիկավկազ ճանապարհը:

[11] 2010 թվականի մարտի 1-ից Վերին Լարսի անցակետը սկսել է գործել՝ թեև որոշ վերապահումներով. պահպանվել է ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծման նկատմամբ սահմանափակումը, ինչը նշանակում է, որ վերագործարկված ճանապարհն առայժմ չի կարող կիրառվել Ռուսաստան արտահանվող հայկական ոգելից խմիչքների փոխադրման պարագայում:

Այսպես, 2006 թ. հանքային ջրերի արտահանման ծավալների աճը նախորդ տարվա համեմատ կազմեց 89%, իսկ 2007 թ. 2005-ի համեմատ դրանց արտահանումն աճեց 2,7 անգամ կամ 169%-ով: Գինիների արտահանման աճը 2006 թ. համեմատաբար զուսպ էր՝ 66%, և սա այն դեպքում, երբ այդ տարի հանրապետությունում գինու արտադրությունը մոտ 3 մլն լիտրով պակաս է եղել նախորդ տարվանից[12]: Իսկ ահա 2007 թ. գինիների արտահանման աճը 2005 թ. համեմատությամբ աննախադեպ էր՝ 250%-ով կամ 3,5 անգամ: Բերված թվերը, ճիշտ է, խոսում են հայկական ըմպելիքների մրցունակության բարձրացման մասին, սակայն չենք կարող չնկատել, որ գինիների և հանքային ջրերի արտադրության և արտահանման ներկայիս ծավալները դեռևս բավարար չեն ռուսական շուկայում կայուն դիրք ապահովելու համար:

Սովորական և հանքային ջրերը Հայաստանի ոգելից և ոչ ոգելից ըմպելիքների ցանկում ավանդաբար զբաղեցրել են երկրորդ տեղը՝ արտահանման ծավալներով զիջելով միայն հայկական կոնյակին: Իսկ ահա գինիները 2006 թ. սկսած արտահանման ծավալների զգալի աճի շնորհիվ արդեն 2007 թ. հայտնվեցին երրորդ տեղում՝ 2005 թ. 5-րդ տեղի փոխարեն: Գինիների արտահանման ծավալները շարունակեցին աճել նաև 2008 թ.: Այսպիսով, վերջին տարիներին իր արտահանման ծավալների սրընթաց աճի շնորհիվ գինին հետ է մղել գարեջուրը (2005 և 2006 թթ. Հայաստանից արտահանվող խմիչքների ցանկում գարեջուրը կայուն կերպով զբաղեցրել է երրորդ տեղը), չնայած վերջինիս արտահանումը, թեև դանդաղ տեմպերով, բայց շարունակում է աճել. 2008 թ. արտահանվել է մոտ 1,6 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ գարեջուր, ինչը 66%-ով գերազանցում է 2005 թ. նույն ցուցանիշը:

Թեև վերջին տարիներին հայկական գինիների և հանքային ջրերի արտահանման ուղղությամբ որոշակի առաջընթաց է նկատվում, այնուամենայնիվ, դրանք ցածր մրցունակություն ունեն ռուսական շուկայում, բացի այդ, հայրենական արտադրողները դեռևս չեն կարողանում համապատասխան ծավալներ ապահովել: Վրաստանի գինու արտահանման տարեկան ծավալները 14-19 անգամ գերազանցում են Հայաստանի նույն ցուցանիշը, ուստի, նման պայմաններում ռուսաստանյան շուկայում վրացական գինիների «պակասը լրացնելու» մասին խոսելն անտեղի է, մանավանդ եթե հայկական գինիները զիջում են նաև իրենց որակական հատկանիշներով: Ներկայումս վրացական խմիչքների «պակասը» ռուսական շուկայում լրացնում են հեռավոր արտասահմանյան երկրները: Եթե մինչ այդ ԱՊՀ երկրներն ավանդաբար ապահովում էին Ռուսաստանի «ալկոհոլային և ոչ ալկոհոլային ըմպելիքների» ողջ ներմուծման 51%-ը, ապա «վրացական արգելքից» հետո ԱՊՀ երկրների մասնաբաժինը Ռուսաստանի տվյալ ապրանքախմբի ներմուծման կառուցվածքում

---

[12] *Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2006 թ. հունվար-դեկտեմբերին (ՀՀ ԱՎԾ, Ե., 2007, էջ 6):*

կրճատվեց մինչև 21-30%-ի[13]: Նշանակում է՝ ԱՊՀ երկրներից ոչ մեկն ի զորու չեղավ «զբաղեցնելու վրացական խմիչքների տեղը ռուսաստանյան շուկայում»:

Վերին Լարսի փակ լինելու հանգամանքն էապես նվազեցնում է ոչ միայն խմիչքների, այլ նաև մնացած բոլոր ապրանքների գծով Հայաստանի արտահանման հնարավորությունները: Սակայն հիմնական շեշտադրումը դրվել է ոգելից և ոչ ոգելից ըմպելիքների արտահանման ծավալների փոփոխության վրա՝ երկու պատճառով. նախ՝ նշված ապրանքախումբն ավանդաբար ամենամեծ ծավալներն է ապահովում Հայաստանից Ռուսաստան արտահանման կառուցվածքում, ապա՝ Ռուսաստանի սահմանած բռնարգելքը տարածվում է վրացական ծագում ունեցող նույնանուն ապ-րանքների վրա:

Ներկայումս բեռների փոխադրումը Ռուսաստան տևում է առնըվազն 8-10 օր, ինչն անընդունելի է հատկապես շուտ փչացող մթերքների համար: Ցամաքային ճանապարհի վերաբացման դեպքում Հայաստանը կկարողանա արտահանել տարեկան առնվազն 20 հազար և առավելագույնը՝ մինչև 25 հազար տոննա բարձրորակ ծիրան[14], որը մեծ պահանջարկ է վայելում ԱՊՀ և եվրոպական երկրրների շուկաներում: Նշենք նաև, որ եթե 2008 թ. հուլիսի դրությամբ արտահանվել էր մոտ 7000 տոննա ծիրան, ապա 2009 թ. միևնույն ժամանակահատվածում՝ 11500 տոննա, որից առավել քան 62%-ը՝ Ռուսաստան, այն էլ՝ Վերին Լարսի փակ լինելու պայմաններում: Վաղահաս ծիրանի առաջին խմբաքանակներն արտահանվում են նույնիսկ ինքնաթիռով: 2009 թ. ինքնաթիռով արտահանվել է 500 տոննա ծիրան՝ 1 կգ-ի դիմաց 500-700 դրամ արտահանման գնով[15], այն դեպքում, երբ մեքենաներով փոխադրվող ծիրանի գները տատանվել են 100-ից 300 դրամի սահմաններում:

Անկասկած, քաղաքական լարվածությունը Վրաստանում, ինչպես նաև չափազանց բարձր տարանցիկ վճարների գանձումը զգալի չափով սահմանափակում են Հայաստանի առևտրային հարաբերություններն արտաքին աշխարհի հետ: Հայ-վրացական առևտուրը ևս զերծ չի մնում արգելքներից և սահմանափակումներից:

Որպես հարևան երկրներ՝ Հայաստանն ու Վրաստանն ունեն փոխադարձ առևտրի լայն հնարավորություններ, որոնք, սակայն, լիարժեք կերպով չեն օգտագործվում: Բացի այն, որ երկու երկրներն էլ անդամակցում են Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, նրանց միջև կնքվել է ազատ առևտրի երկկողմ համաձայնագիր[16], որի շրջանակում պայմանավորվածություն է ձեռք բերվել

---

[13] *Հաշվարկվել է համաձայն՝ Внешняя торговля Российской Федерации со странами СНГ. Статистический сборник "Россия в цифрах – 2009", Федеральная служба государственной статистики, М., 2009.*

[14] **Աղալարյան Ք.,** *Եթե Վերին Լարսը բացվի, ծիրանի արտահանումը կգերազանցի 20 հազար տոննան, http://www.hetq.am/am/ - 17.07.2009:*

[15] *Արտահանման գնի մեջ փոխադրման ծախսերը ներառված չեն (արտահանումը հաշվառվում է FOB գներով):*

[16] *Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի Հանրապետության կառավարության միջև ազատ առևտրի մասին, կնքվել է 1995 թ. օգոստոսի 14-ին, Ստեփանավանում, վավերացվել 1996 թ. հունվարի 16-ին և ուժի մեջ մտել միայն 1998 թ. նոյեմբերի 11-ից (տե՛ս http://www.armeniaforeignministry.am):*

կողմերից մեկի ծագում ունեցող և մյուս կողմի համար նախատեսվող ապրանքների նկատմամբ չկիրառել քանակական սահմանափակումներ, մաքսատուրքեր և դրանց համարժեք այլ հարկեր ու գանձումներ: Փաստորեն, Վրաստան ներմուծվող հայկական ծագում ունեցող ապրանքներն, ըստ համաձայնագրի, պետք է ազատվեն մաքսատուրքերի վճարումից: Գործնականում, սակայն, արտահանողներից ոչ բոլորին է հաջողվում փաստաթղթերով հիմնավորել իրենց ապրանքների հայաստանյան ծագումը[17], իսկ ծագման երկրի հավաստագրի բացակայությունն արդեն իսկ հիմք է ներմուծվող ապրանքներից մաքսատուրք գանձելու համար[18]:

Եթե նույնիսկ հայ գործարարներին հաջողվում է օգտվել մաքսատուրքերից ազատման իրենց իրավունքից, նրանք հազվադեպ են կարողանում անարգել ու առանց լրացուցիչ ծախսումների անցնել հայ-վրացական սահմանը: Հայաստանից Վրաստան մեկ տոննա միրգ փոխադրելու համար պետականորեն գանձվում է 300 վրացական լարի[19], որը համարժեք է մոտ 66300 ՀՀ դրամի[20]: Ընդ որում, հայ-վրացական սահմանակետում բեռնափոխադրման համապատասխան թույլտվություն ստանալու համար բանջարեղենի դեպքում կրկնակի պակաս գումար է գանձվում: Դրա հետևանքով, վրացական շուկայում հայկական միրգը համեմատաբար ավելի թանկ գնե-րով է վաճառվում, քան բանջարեղենը:

Բացի այդ, համաձայն Վրաստանի Արտոնագրերի և թույլտվությունների մասին օրենքի՝ Վրաստան գյուղմթերք ներմուծելու համար պահանջվում է հատուկ թույլտվություն Վրաստանի գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության, անասնաբուժության և բույսերի պաշտպանության ազգային ծառայության կողմից[21]: Վրաստան սննդամթերք ներմուծելու մտադրություն ունեցող անձանցից մաքսային մարմինները պահանջում են նախապես ներկայացնել համապատասխան թույլտվություն, իսկ խոշոր

---

[17] *Գործարարներից շատերի համար երբեմն առավել նախընտրելի է մաքսատուրքերի վճարումը Վրաստանում, քանզի ծագման հավաստագրի ձեռքբերումն ավելի ժամանակատար և ծախսատար գործընթաց է:*

[18] *Վրաստանում կիրառվում է ներմուծման մաքսատուրքերի երեք դրույքաչափ՝ 0%, 5% և 12%: Ընդ որում, մաքսատուրքերի ամենաբարձր՝ 12% դրույքաչափով է հարկվում գյուղատնտեսական ապրանքների գերակշիռ մասը: Վրաստան ներմուծվող ապրանքներից գանձվում է նաև 18% ԱԱՀ (Customs Code of Georgia 2006-07-25, available at http://www.parlament.ge)*:

[19] *«Վրաստան միրգ տեղափոխելը բանջարեղենից թանկ է», http://www.hetq.am/am/economy/a-info-3/ - 04.07.2009:*

[20] *Հաշվարկվել է ՀՀ դրամ / վրացական լարի արժութային զույգի համար 2010 թ. հունվարի 21-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած փոխանակային փոխարժեքի հիման վրա, այն է՝ 1 GEL= 220,99 AMD:*

[21] *Study of Economic Relations Between Georgia and Armenia: The Development of Regional Trade Related Growth in Samtskhe-Javakheti, 2007, Preared for UNDP by the Caucasus Research Resource Center – Georgia, p. 17.*

ներմուծումների դեպքում նաև՝ Վրաստանի ռեզիդենտ հանդիսացող բանկային հաստատության կողմից թողարկված բանկային երաշխիք (40 000 եվրո արժողությամբ):

Հայաստանից Վրաստան ապրանք ներմուծողները վրացական սահմանակետերում բախվում են նաև ենթակառուցվածքային խոչընդոտների: Նրանք ստիպված են լրացուցիչ երկար ճանապարհ անցնել մաքսային վճարումներն իրականացնելու և կրկին վերադառնալ սահմանակետ՝ ապրանքների մաքսազերծման համար: Օրինակ, Նինոծմինդայի սահմանակետով բեռների փոխադրման դեպքում վճարումներն իրականացվում են Վալեում, որը սահմանակետից 150 կմ հեռու է: Այս և այլ ֆինանսական ու տեխնիկական բնույթի արգելքների կիրառումը սահմանափակում է Հայաստանից Վրաստան արտահանման հնարավորությունները, հանգեցնում հայկական ապրանքների գների բարձրացմանը՝ նվազեցնելով դրանց մրցունակությունը վրացական շուկայում: Այնպես որ երկրների միջև ազատ առևտրի համաձայնագրի առկայությունը բավարար հիմք չէ ազատ ու անարգել առևտրի կազմակերպման համար: Այնուամենայնիվ, հայ-վրացական առևտուրը շարունակում է աճել՝ անկախ ոչ սակագնային սահմանափակումների կիրառումից:

Վրաստան արտահանման ծավալները կայուն աճի միտում ունեն: 2008 թ. ՀՀ արտահանումը Վրաստան գերազանցել է 81,8 մլն ԱՄՆ դոլարը, որը փոքր-ինչ զիջում էր 2007 թվականին գրանցված արտահանման առավելագույն մակարդակը, այն է՝ գրեթե 88 մլն ԱՄՆ դոլար: Պատճառները, թերևս, երկուսն են. մի կողմից, ամբողջ աշխարհը «տառապում» է համաշխարհային ֆինանսական ճգնաժամից, մյուս կողմից էլ 2008 թվականը քաղաքական լուրջ բախումների տարի էր Վրաստանի համար, ինչը չէր կարող որևէ կերպ չանդրադառնալ վերջինիս տնտեսության վրա:

Ըստ վիճակագրական տվյալների, 2003 թ. սկսած՝ Վրաստանի հետ առևտրում Հայաստանն ունի դրական առևտրային հաշվեմնացորդ, այսինքն՝ հայկական ապրանքները բավականաչափ մրցունակ են վրացական շուկայում: Ճիշտ է, Հայաստանից Վրաստան արտահանման ծավալները տարեցտարի ավելանում են, սակայն նկատենք, որ Վրաստանի հետ առևտրում Հայաստանի դրական հաշվեմնացորդի ձեռքբերման հարցում նշանակալի դերակատարում է ունեցել ներմուծումների հաշվառման սկզբունքի փոփոխությունը. ինչպես գիտենք, ԱՀԿ անդամակցությամբ պայմանավորված, 2003 թ. սկսած՝ կիրառվում է ներմուծումների հաշվառման՝ «ըստ ծագման երկրի» սկզբունքը, մինչ այդ գործող «ըստ առևտուր անող երկրի» սկզբունքի փոխարեն, ինչը զգալիորեն կրճատում է Վրաստանից կատարվող ներմուծումների արժեքային ցուցանիշը: Վրաստան արտահանվող ապրանքների ցանկում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն ցեմենտը, սուրճը, ապակե տարաները, պլաստմասսայից իրերը, ինչպես նաև վերգետնյա տրանսպորտային միջոցները (բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմից) և դրանց մասերը: Նշված հինգ ապրանքախմբերին է բաժին ընկել Հայաստանից Վրաստան 2007-2008 թթ. ողջ արտահանման առավել քան 80%-ը:

Արտահանվող հանքահումքային արտադրանքի գերակշիռ մասը կազմող՝ «աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ» ապրանքախումբն ապահովել է 2007 թ. Վրաստան ուղղված ողջ արտահանման 35%-ը, իսկ 2008 թ.՝ գրեթե 47%-ը (38,3 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ): Ցեմենտի արտահանման ծավալների զգալի աճի շնորհիվ վերջին տարիներին ապրանքախումբը գլխավորում է Վրաստան արտահանվող տեսականու անվանացանկը: 2006 թ. ցեմենտի արտահանումը (15,6 մլն ԱՄՆ դոլար) 2005 թ. համեմատ աճել էր 42,6%-ով և առավել քան 50 անգամ՝ 2002 թ. համեմատ: Նշենք նաև, որ Հայաստանում գոյություն ունի ցեմենտի արտադրության երկու տեսակ՝ չոր և թաց, որոնք երկուսն էլ մրցունակ են վրացական շուկայում: Այնուամենայնիվ, քանի որ թաց ցեմենտի արտադրության մեջ գազի վրա կատարված ծախսերը կազմում են 70-75%[22], ապա Ռուսաստանի կողմից գազի գների վերանայումը կարող է մեծապես ազդել դեպի Վրաստան թաց ցեմենտի արտահանման ծավալների վրա, սակայն չոր ցեմենտը կարող է մրցունակ մնալ: Ի դեպ, 2009 թ. ապրիլի 1-ից Հայաստանի համար ռուսական գազի արժեքը հազար խորանարդ-մետրի համար համարժեք է եղել 154 դոլարի՝ մինչ այդ գործող 110 դոլարի փոխարեն: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, 2010 թ. ապրիլի 1-ից այն1000 մ^3-ի համար արդեն արժե 180 դոլար՝ ներառյալ ԱԱՀ[23]:

Հայաստանից զգալի քանակությամբ Վրաստան են արտահանվում նաև այնպիսի ապրանքներ, որոնք գլխավորապես ՀՀ են ներմուծվում այլ երկրներից, և որոնց մեծ մասի արտադրության համար մեր երկրում բավարար պայմաններ չկան, օրինակ՝ սուրճը, կակաո պարունակող մթերքները, պլաստմասսան, բամբակը և այլն: Հայաստանի վրացական արտահանումների կառուցվածքում իր ծավալներով երկրորդ տեղը զբաղեցնող սուրճն ամբողջությամբ ներկրվում է, տեղում աղացվում, փաթեթավորվում, ապա արտահանվում Վրաստան և ԱՊՀ այլ երկրներ[24]: 2008 թ. Վրաստան է արտահանվել 1,2 մլն ԱՄՆ դոլարի սուրճ կամ Հայաստանից արտահանված ողջ սուրճի 78%-ը: Թեև Հայաստանում ավելացված արժեքը Վրաստանին վաճառվող սուրճի գնի չնչին մասն է կազմում, այնուամենայնիվ, վերջինիս արտահանումը Վրաստան կարելի է հնարամիտ գործարար քայլ համարել, մանավանդ որ այդ նույն սուրճը նախքան փաթեթավորվելն ու արտահանվելը Հայաստան է հասնում հենց Վրաստանի տարածքով՝ իր արժեքի մեջ ներառելով Փոթի-Երևան փոխադրման ծախսերը:

Վրաստանից ներկրվող ապրանքների ցանկում զգալի մասնաբա-

---

[22] *Հայաստան-Վրաստան հարաբերություններ. չօգտագործված հնարավորություններ…, էջ 33:*

[23] *Время перехода к рыночным ценам на газ, http://www.armrusgasprom.am/ru/infocenter/:*

[24] *2008 թ. Վրաստանը դեռևս դուրս չէր եկել ԱՊՀ կազմից. Վրաստանի համագործակցությունն ԱՊՀ-ի հետ պաշտոնապես դադարեցրեց 2009 թ. օգոստոսի 19-ից:*

ժին ունեն մրգերն ու ընկուզեղենը, շաքարն ու դրանից պատրաստված հրուշակեղենը, փայտանյութը, պարարտանյութերը և այլն: 2008 թ. նախորդ տարվա համեմատ 86%-ով ավելացել է մրգերի, բանջարեղենի և ընկուզեղենի ներմուծումը Վրաստանից՝ գերազանցելով 9,8 մլն ԱՄՆ դոլարը, ավելացել է նաև սև մետաղների ներմուծումը: Իսկ ահա շաքարի և հրուշակեղենի ներմուծումը 67%-ով նվազել է նախորդ տարվա համեմատ: Հայաստանը Վրաստանից մարդատար ավտոմեքենաներ ներմուծող գործընկեր երկրների շարքում զբաղեցնում է երկրորդ տեղը՝ զիջելով միայն Ադրբեջանին (45%) և առաջ անցնելով Թուրքիայից (5%): Միայն 2008 թ. Վրաստանից ներմուծվել է ավելի քան 34,8 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ 2169 ավտոմեքենա կամ Վրաստանից արտահանված ավտոմեքենաների 42%-ը[25]:

Այսպիսով, տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ հայ-վրացական առևտրի իրական ներուժի միայն մի մասն է օգտագործվում: Մաքսային ընթացակարգերի պարզեցման դեպքում փոխադարձ առևտրի ցուցանիշները կարող են մի քանի անգամ գերազանցել ներկայիս մակարդակը:

ВЛИЯНИЕ РУССКО-ГРУЗИНСКИХ ОТНОШЕНИЙ НА ВНЕШНЮЮ ТОРГОВЛЮ РА

ПАХЛЯН А. А.

Резюме

Во внешнеторговых отношениях Армении весьма велика роль Грузии. Любые политические или экономические проблемы, возникающие в нашей соседней республике, непосредственно влияют на внешний товарооборот Армении. Особенно значительными были торгово-экономические убытки Армении в результате обострившихся русско-грузинских отношений в последние годы. Российское эмбарго на ввоз грузинских вин и минеральных вод могло послужить стимулом для увеличения объемов одноименных армянских товаров, экспортируемых в Россию. С введением запрета значительно возросли объемы экспорта армянских вин (3,5 раза) и минеральных вод (2,7 раза) в Россию. Однако Армении не удалось восполнить “дефицит” грузинских напитков на российском рынке. Помимо недостаточных экспортных объемов и слабого качества в числе причин необходимо отметить закрытие сухопутной дороги в Россию, что значительно ограничивает экспортные возможности Армении.

[25] *Հաշվարկվել է համաձայն External Trade of Georgia 2008, Statistical Publication, Ministry of Economic Development of Georgia, Department of Statistics, Tbilisi, 2009, p.135.*